ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2023

ՍՈԼՖԵՋՈ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 Հնչյունը ֆիզիկական երևույթ է, որն ունի հետևյալ հատկությունները.

1) բարձրություն, ուժգնություն, տևողություն և արագություն
2) բարձրություն, ուժգնություն, հնչողություն և նրբբերանգ
3) բարձրություն, հզորություն, տևողություն և օբերտոն
4) բարձրություն, ուժգնություն, տևողություն և տեմբր

2 Լարվածք է կոչվում

1) երաժշտական համակարգի հնչյունների բացարձակ բարձրությունը
2) երաժշտական հնչյունների դասավորությունը
3) երաժշտական հնչյունների կանոնավոր շարվածքը
4) երաժշտական համակարգի հնչյունների հավասար բարձրությունը

3 Հնչյունաշարի հնչյունները լինում են

1) հիմնական և օժանդակ
2) հիմնական և ածանցյալ
3) առաջնային և ալտերացված
4) առաջնային և լրացուցիչ

4 Ինտերվալներն ունեն երկու մեծություն՝

1) բացարձակ և տոնային
2) բացարձակ և լրացուցիչ
3) աստիճանային և տոնային
4) աստիճանական և լրացուցիչ

5 Փոքր սեպտիման կազմված է

1) 6 աստիճանից և 7 տոնից
2) 6 աստիճանից և 5 տոնից
3) 7 աստիճանից և 6 տոնից
4) 7 աստիճանից և 5 տոնից

6 Եռատոնն այն ինտերվալն է, որը բաղկացած է

1) երեք աստիճանից
2) երեք հնչյունից
3) երեք տոնից
4) երեք կիսատոնից

7 Մեծացրած ինտերվալները այն ինտերվալներն են, որոնք

1) մեծ են մաքուր ինտերվալներից մեկ տոնով
2) մեծ են փոքր ինտերվալներից կես տոնով
3) մեծ են մաքուր և փոքր ինտերվալներից կես տոնով
4) մեծ են մաքուր և մեծ ինտերվալներից կես տոնով

8 Մինոր կվարտսեքստակորդի կառուցվածքն է.

1) մ.3 + մծg.3
2) մծg.4 + փ.3
3) մք.4 + մ.3
4) մք.4 + փ.3

9 Սեքստակորդը եռահնչյան

1) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
2) առաջին շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը
3) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի կվինտային տոնը
4) երկրորդ շրջվածքն է, և բասում գտնվում է ակորդի տերցիային տոնը

10 D_3^4- ը կառուցվում է

1) 7-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.2 + փ.3
2) 7-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.2 + մ.3
3) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.2 + փ.3
4) 2-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.2 + մ.3

11 VII_5^6- ը հարմոնիկ մաժորում ունի հետևյալ կառուցվածքը.

1) փ.3 + մ.2 + փ.3
2) փ.3 + փ.3 + մծg.2
3) մ.2 + փ.3 + փ.3
4) փ.3 + փ.3 + փքg.2

12 II_2-ը մինորում

1) կառուցվում է 6-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 + փ.3
2) կառուցվում է 4-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է փ.3 + մ.2 + մ.3
3) կառուցվում է 1-ին աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3+ փ.3
4) կառուցվում է 7-րդ աստիճանի վրա, և նրա կառուցվածքն է մ.2 + փ.3 +մ.3

13 Հնչյունների միագումարը, որոնք իրենց կապերի հիման վրա միավորվում են տոնիկա ունեցող համակարգում, կոչվում է

1) հնչյունաշար
2) գամմա
3) լադ
4) տոնայնություն

14 Զուգահեռ տոնայնություններն ունեն

1) միևնույն հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
2) տարբեր հնչյունաշար, տարբեր կառուցվածքներ, միևնույն տոնիկաներ
3) միևնույն հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ
4) տարբեր հնչյունաշար, միևնույն կառուցվածքներ, տարբեր տոնիկաներ

15 Հարմոնիկ մաժորին բնորոշ է

1) 6^{+} աստիճանը
2) 7^{+} աստիճանը
3) 6^{-}, 7^{-} աստիճանները
4) 6^{-} աստիճանը

16 Ո՞ր շարքում են միայն Միջնադարյան լադեր

1) Իոնական, Դորիական, Կրկնակի մեծացրած, Լիդիական
2) Փռյուգիական, Միքսոլիդիական, Լոկրիական, Էոլական
3) Էոլական, Պենտատոնիկա, Լիդիական, Լոկրիական
4) Միքսոլիդիական, Անհեմիտոն, Փռյուգիական, Հարմոնիկ

17 Մելոդիկ մինորին բնորոշ է

1) 6^{+} աստիճանը
2) 7^{-} աստիճանը
3) 6^{+}, 7^{+} աստիճանները
4) 6^{-}, 7^{-} աստիճանները աստիճանը

18 Ռիթմ է կոչվում

1) միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների հաջորդականությունը
2) հնչյունների ժամանակային կազմակերպված հաջորդականությունը
3) միատեսակ կամ տարբեր տևողություն ունեցող հնչյունների կազմակերպված հաջորդականությունը
4) միատեսակ հնչյունների կազմակերպված հաջորդականությունը

19 Պարզ են համարվում այն չափերը, որոնք ունեն

1) մի քանի շեշտ
2) մեկ կամ մի քանի մաս
3) մեկ մաս
4) մեկ շեշտ

20 Այն չափերը, որոնք առաջանում են տարբեր պարզ չափերից, կոչվում են

1) փոփոխական չափեր
2) բարդ չափեր
3) բարդ խառը չափեր
4) պարզ խառը չափեր

21 Տակտում կա այնքան խումբ, որքան

1) հնչյունների քանակն է
2) հիմնական մասերի քանակն է
3) շեշտերի քանակն է
4) թույլ մասերի քանակն է

22 Այն նշանը, որը դրվում է հնգագծի սկզբում և ցույց է տալիս որոշակի նոտայի տեղը, կոչվում է

1) նոտա
2) չափ
3) բանալի
4) ակոլադ

23 ♯ նշանը հնգագծի երկրորդ գծի վրա կոչվում է

1) սոպրանոյի բանալի
2) ալտի բանալի
3) բասի բանալի
4) մեցցո-սոպրանոյի բանալի

24 Նշվածներից ո՞ր շարքում են ընդգրկված միայն զարդահնչյունները /մելիզմները/.

1) ֆորշլագ, տրել, մորդենտ, գրուպետտո
2) ֆորշլագ, ֆիգուրացիա, գրուպետտո, տրել
3) արպեջիո, ֆիգուրացիա, տրիոլ, տրեմոլո
4) մորդենտ, տրեմոլո, արպեջիատո, ֆորշլագ

25 Նշվածներից ո՞ր շարքում են բոլոր տերմինները նշանակում տեմպ.

1) Largo, accelerando, Andante, piu mosso
2) Allegro, Grave, veloce, attacca
3) A tempo, Lento, smorzando, ritenuto
4) Prestissimo, Festivo, Ardente, Moderato

26 Հետևյալ տերմինները՝ Sostenuto, Appassionato, Con anima, Leggiero, Doloroso նշանակում են (ըստ հերթականության)

1) Թախծալի, զգացմունքով, արագ, կրակոտ, կրքոտ
2) Համեստ, տառապալի, ձգձգված, շարժուն, թախծալի
3) Զուսպ, կրքոտ, ոգևորությամբ, թեթև, թախծալի
4) Չափավոր, կրքոտ, հուզված, շարժուն, թախիծով

27 Ո՞ր շարքի աստիճաններն են պատկանում սուբդոմինանտային խմբին.

1) I, IV, VI
2) VI, IV, II
3) I, III, VII
4) III, V, IV

28 Ո՞ր շարքում են ընդգրկված Ազատ ոճի պոլիֆոնիայի գրելաձևերը.

1) Ֆուգա, ինվենցիա, Basso ostinato
2) կոնտրապունկտ, իմիտացիա, ֆուգատո
3) ֆուգա, ստրետտա, մոտետ
4) կանոն, ուղղաձիգ շարժուն կոնտրապունկտ, ֆուգետտա

29 Պարզ և բարդ եռամաս ձևերը տարբերվում են միմյանցից հետևյալ առանձնահատկություններով.

1) Պարզ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը պարզ մասեր են, բարդ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը երեք բարդ մասեր են
2) Պարզ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը երեք պարզ մասեր են, բարդ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը՝ երկու բարդ մաս
3) Պարզ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը պարբերություններ են, բարդ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը՝ պարզ երկմաս կամ եռամաս ձևեր
4) Պարզ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը պարզ մասեր են, բարդ եռամաս ձևի բաղկացուցիչ մասերը՝ բարդ մասեր

30 Սոնատային ձևը այն ձևն է, որը

1) հիմնված է երկու թեմաների հակադրության վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում, ռեպրիզ
2) հիմնված է երկու թեմաների նմանակման վրա և ծավալվում է երկու բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում
3) հիմնված է երեք թեմաների հակադրության վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, մշակում, ռեպրիզ
4) հիմնված է երկու թեմաների նմանակման վրա և ծավալվում է երեք բաժնով՝ էքսպոզիցիա, ռեպրիզ, մշակում

31 Որոշել հատվածի տոնայնությունը.



1) h moll
2) G dur
3) D dur
4) e moll

32 Տվյալ շարքում ըստ հերթականության որոշել լադերը.



1) Դորիական, Լիդիական, Փռյուգիական, Միքսոլիդիական
2) Էոլական, Իոնական, Փռյուգիական, Միքսոլիդիական
3) Լիդիական, Միքսոլիդիական, Իոնական, Մաժոր
4) Մինոր, Ամբողջատոն, Էոլական, Լիդիական

33 Ո՞ր շարքում են միայն բնորոշ ինտերվալներ.

1) 

2) 

3) 

4) 

34 Ո՞ր տոնայնությունների մեջ են գրված հետևյալ եռատոները.



1) G dur- e moll, Fis dur- fis moll
2) D dur- d moll, H dur- h moll
3) A dur- a moll, H dur- h moll
4) D dur- d moll, B dur-b moll

35 Տվյալ շարքում ըստ հերթականության որոշել ակորդները.



1) Փքg 3^5, VII$_5^6$, D$_5^6$, II$_7$, Մաժ $_6$, Մին 6
2) Փքg 3^5, II$_5^6$, VII$_3^4$, D$_7$, Փքg $_4^6$, Մաժ 6
3) Մծg 3^5, II$_3^4$, II$_5^6$, D$_7$, Մին 6, Փքg $_4^6$
4) Մծg 3^5, D$_3^4$, II$_5^6$, VII7, Մաժ $_4^6$, Փքg 6

36 Ո՞ր տոնայնության մեջ են գրված հետևյալ ակորդները.



1) G dur- g moll
2) F dur
3) A dur
4) A dur- a moll

37 Ո՞ր շարքում են բոլոր լուծումները ճիշտ.

1) 

2) 

3) 

4) 

38 Որոշել հատվածի չափը.



1) 2/4
2) 3/4
3) 3/8
4) 6/8

39 Տվյալ շարքում ըստ հերթականության որոշել բանալիները և հնչյունները.



1) Բասի՝ Des, h; Ջութակի՝ fis^3, f; Ալտի՝ f, as^2; Սոպրանոյի՝ h^1, ais; Տենորի՝ dis, e^1
2) Բասի՝ Es, h; Ջութակի՝ dis^3, f; Ալտի՝ g, as^2; Սոպրանոյի՝ h^1, ais; Տենորի՝ dis, e^1
3) Բասի՝ ges, h; Ջութակի՝ cis^3, g; Սոպրանոյի՝ h^1, fis; Ալտի՝ g, as^2; Տենորի՝ fis, e
4) Բասի՝ Es, h; Ջութակի՝ fis^3, f; Ալտի՝ f, as^2; Բարիտոնի՝ dis, e^1; Սոպրանոյի՝ h^1, ais

40 Ըստ հերթականության նշել տոնայնությունները, որոնցում կհնչի հատվածը՝ փոխադրելով փ.7 վար, քրոմատիկ կիսատոն վեր, բասի բանալի:



1) a moll, as moll, c moll
2) b moll, a moll, gis moll
3) a moll, gis moll, h moll
4) b moll, as moll, f moll

41 Ո՞վ է հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրը

1) Քրիստափոր Կարա-Մուրզա
2) Մակար Եկմալյան
3) Կոմիտաս
4) Տիգրան Չուխաջյան

42 Ո՞վ է առաջին հայկական քառաձայն պատարագի հեղինակը

1) Բարսեղ Կանաչյան
2) Մակար Եկմալյան
3) Կոմիտաս
4) Քրիստափոր Կարա-Մուրզա

43 Նշվածներից ո՞ր ռոմանսն է հեղինակել Ռոմանոս Մելիքյանը.

1) «Լորիկ»
2) «Պաղ ջուր կուգար»
3) «Արևելյան օրորոցային»
4) «Աշուն»

44 Ո՞վ է հայկական առաջին բալետի հեղինակը.

1) Գրիգոր Եղիազարյան
2) Էդգար Հովհաննիսյան
3) Արամ Խաչատրյան
4) Գրիգոր Հախինյան

45 Նշվածներից ո՞ր կերպարն է Ավետ Տերտերյանի «Կրակե օղակ» օպերայից.

1) Դրաստամատ
2) Մոսի
3) Պոետ
4) Աշուղ

46 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորը հայկական «Հզոր խմբակի» անդամ չէ.

1) Ադամ Խուդոյան
2) Ղազարոս Սարյան
3) Տիգրան Մանսուրյան
4) Առնո Բաբաջանյան

47 Նշվածներից ո՞ր ստեղծագործությունն է գրված բալլադի ժանրում.

1) Լյուդվիգ վան Բեթհովեն՝ «Մարմոտ»
2) Միխայիլ Գլինկա՝ «Վենետիկյան գիշեր»
3) Ֆրանց Շուբերտ՝ «Անտառի արքան»
4) Ֆելիքս Մենդելսոն՝ «Արտույտի երգը»

48 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է հեղինակել «Գոսերի տրեմոլոյով» սիմֆոնիան.

1) Յոզեֆ Հայդն
2) Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտ
3) Ֆրանց Շուբերտ
4) Էդվարդ Միրզոյան

49 Ամատի, Գվարների, Ստրադիվարի՝ հանրաճանաչ

1) դաշնակահարներ են
2) ջութակահարներ են
3) ջութակի վարպետներ են
4) դաշնամուրի վարպետներ են

50 Կոնստանտին Սարաջև, Եվգենի Մրավինսկի, Հերբերտ ֆոն Կարայան, Արտուրո Տոսկանինի՝ հանրաճանաչ

1) կոմպոզիտորներ են
2) դիրիժորներ են
3) ջութակահարներ են
4) թավջութակահարներ են

51 Դմիտրի Շոստակովիչի №7 սիմֆոնիայի «ներխուժման» դրվագը գրված է

1) Ռոնդոյի ձևով
2) Վարիացիոն ձևով
3) Բարդ եռամաս ձևով
4) Սոնատային ձևով

52 Նշվածներից ո՞ր օպերան է գրված ըստ Ալեքսանդր Պուշկինի համանուն չափածո վեպի.

1) «Ձյունանուշ»
2) «Եվգենի Օնեգին»
3) «Անմահ Կոշչեյը»
4) «Օռլեանի կույսը»

53 Նշվածներից ո՞վ է «Ամուսնություն», «Խովանշչինա», «Սորոչինյան տոնավաճառ» օպերաների հեղինակը.

1) Միլի Բալակիրև
2) Մոդեստ Մուսորգսկի
3) Ալեքսանդր Դարգոմիժսկի
4) Անտոն Ռուբինշտեյն

54 Սերգեյ Պրոկոֆևի ո՞ր բալետի լիբրետոն է ստեղծել ծագումով հայ նկարիչ Գեորգի Յակուլովը (Ս.Պրոկոֆևի հետ համատեղ).

1) «Անառակ որդին»
2) «Դնեպրի վրա»
3) «Պողպատյա թռիչք»
4) «Ծաղրածու»

55 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորն է ռուսական առաջին երեք բալետների հեղինակը.

1) Նիկոլայ Ռիմսկի-Կորսակով
2) Ալեքսանդր Գլազունով
3) Պյոտր Չայկովսկի
4) Ցեզար Կյուի

56 Ի՞նչ սկզբունքով են դասավորված Յոհան Սեբաստիան Բախի «Լավ տեմպերացված կլավիր»-ի պրելյուդներն ու ֆուգաները

1) Ըստ տոնների
2) Ըստ կիսատոնների
3) Ըստ տոնայնությունների կվինտային շրջանի
4) Ըստ տոնայնությունների կվարտային շրջանի

57 Նշվածներից ո՞ր ժանրը տեղ չի գտել Ֆրեդերիկ Շոպենի ստեղծագործության մեջ.

1) Կոնցերտ
2) Պոլոնեզ
3) Օպերա
4) Սոնատ

58 Նշվածներից ո՞ր կոմպոզիտորը իտալական օպերային «Վերիզմի» ներկայացուցիչ չէ.

1) Պիետրո Մասկանի
2) Ռուջերո Լեոնկավալո
3) Վինչենցո Բելլինի
4) Ջակոմո Պուչինի

59 Նշվածներից ո՞ր օպերայից է Ռիխարդ Վագները սկսում նորամուծությունները (դեպի երաժշտական դրամա).

1) «Տանհոյզեր»
2) «Թռչող հոլանդացի»
3) «Պարսիֆալ»
4) «Լոհենգրին»

60 Նշվածներից ո՞ր ստեղծագործությունը չի պատկանում Ֆերենց Լիստի գրչին.

1) «Տակո»
2) Պրելյուդներ
3) «Համլետ»
4) «Մանֆրեդ»